ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«19» 10 2021թ.

ՀՐԱՄԱՆ N 543-Հ

«ՍԻԲԻՐ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 2 հավելվածի 18-րդ կետով և հիմք ընդունելով «Սիբիր «Ավիաընկերություն» ՀԲԸ 2021 թվականի հոկտեմբերի 15-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Սիբիր «Ավիաընկերություն» ՀԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Սարատով/UWSG/-Երևան/UDYZ/-Սարատով/UWSG/ երթուղով՝ 2021 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2022 թվականի մարտի 24-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածում՝ 2021 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2022 թվականի մարտի 24-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Սարատով/UWSG/ ուղղությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, և հետևաբար սույն կետում նշված ուղղությամբ մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «զ» ենթակետով սահմանված արտոնությունը: Նշված ուղղությամբ Ընկերության IATA ամառային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության ներկայացվող հայտի հիման վրա:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պաշտոնակատարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

10/19/2021

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 766/181021
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 766/181021
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR TWO AND MORE CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Սիբիր «Ավիաընկերություն» ՀԲԸ PJSC «Siberia «Airlines»
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	Airbus 319, Airbus 320, Airbus 320N, Airbus 321, Airbus 321N, Boeing 738, Embraer ERJ170-100LR
Հաճախականությունը Frequency	շաբաթական 1 չվերթ 1 flight per week
Երթուղին Air route	Սարատով/UWSG/-Երևան/UDYZ/-Սարատով/UWSG/ Saratov/UWSG/-Yerevan/UDYZ/-Saratov/UWSG/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	04/11/2021 մինչև 24/03/2022 04/11/2021 till 24/03/2022

Recoverable Signature

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ
CHAIR OF CIVIL AVIATION COMMITTEE
TATEVIK REVAZYAN

Տաթևիկ Ռևազյան
Signed by: REVAZYAN,TATEVIK,7201880926

19.10.2021
(տալու ամսաթիվը)
(date of issue)